ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2019թ. թիվ 281-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԹԻՎ 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 20.03.2019թ. և Ալավերդի համայնքի ղեկավարի 15.03.2019թ. թիվ 513 գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Չատինյան Հասմիկ» բառերը փոխարինել «Ոսկանյան Անահիտ» բառերով, «Փարեմուզյան Նունե» բառերը՝ «Զոբանյան Ռուզաննա» բառերով, «Պապինյան Վահե» բառերը՝ «Մխիթարյան Տիգրան» բառերով և «Պարանյան Վահե» բառերը՝ «Վարոսյան Ստեփան» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Գոհար Բարսեղյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Արմինե Վարոսյանի և համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Սասուն Խեչումյանի թեկնածությունները:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 30
ք.Վանաձոր